


▶ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

▶ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի
2020թ. գործունեության վերաբերյալ

▶ Երևան, 2021



ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|----|
| ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ | 2 |
| ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓԱԳԻՐ | 3 |
| ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ | 4 |
| ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | 7 |
| ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ | 11 |
| ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ԹԵՄԱՏԻԿ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 17 |
| ԱՅԼ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 18 |
| ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ | 19 |

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

| | |
|------------------------------------|---|
| ԱՊՀ | Անկախ պետությունների համագործակցություն |
| Եվրասիական խումբ | Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հարցերով Եվրասիական տարածաշրջանի երկրների խումբ |
| ՉՈՉ ՏՖ | Չանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորում |
| Էզմոնտ խումբ | Ֆինանսական հետախուզության մարմինների Էզմոնտ խումբ |
| ԿԳՀ | Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն |
| ՄԱԿ ԱԽ | Միացյալ ազգերի կազմակերպության անվտանգության խորհուրդ |
| ՄԱՆԻՎԱԼ հանձնախումբ | Եվրոպայի խորհրդի փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցառումների գնահատման փորձագետների ՄԱՆԻՎԱԼ հանձնախումբ |
| Միջգերատեսչական հանձնաժողով | «Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողով |
| ՊՏԵԳ | Պարտադիր տեղեկացման ենթակա գործարք |
| ՓԼ/ԱՖ | Փողերի լվացում և ահաբեկչության ֆինանսավորում |
| ՔԱՌԱ | Քաղաքական ազդեցություն ունեցող անձ |
| Օրենք | «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք |
| ՖԱԹՖ | Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խումբ |
| ՖԴԿ | ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոն |
| ՖՀՄ | Ֆինանսական հետախուզության մարմին |

ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Սույն հաշվետվությամբ ներկայացվում է 2020թ. ընթացքում ՖԴԿ-ի կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում իրականացված աշխատանքների ընդհանուր նկարագիրը: Մասնավորապես, ըստ համապատասխան բաժինների անդրադարձ է կատարվում հետևյալ թեմաներին.

- **Վիճակագրական տվյալներ.** Այս բաժնում ներկայացվում են վիճակագրական տվյալներ հաշվետվություն տրամադրող անձանց կողմից ՖԴԿ-ին տրամադրված ՊՏԵԳ-ների և ԿԳՀ-ների վերաբերյալ.

- **Կանխարգելիչ միջոցառումներ.** Այս բաժնում ներկայացվում են տեղեկություններ ՓԼ/ԱՖ ռիսկերի զսպման ուղղությամբ ձեռնարկված կանխարգելիչ միջոցառումների, այդ թվում՝ հաշվետվություն տրամադրող անձանց տրված հանձնարարականների, տեղեկատվական համակարգերի զարգացմանն ուղղված աշխատանքների վերաբերյալ.

- **Համագործակցության շրջանակներ.** Այս բաժնում ներկայացվում են տեղեկություններ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտի ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային գործընկերների հետ համագործակցության ընթացքի և արդյունքների վերաբերյալ.

- **Ռազմավարական և թեմատիկ վերլուծություններ.** Այս բաժնում ներկայացվում են տեղեկություններ ՓԼ/ԱՖ համակարգային և ոլորտային ռիսկերի բացահայտմանն ու գնահատմանն ուղղված ռազմավարական և թեմատիկ վերլուծությունների վերաբերյալ.

- **Այլ նախաձեռնություններ.** Այս բաժնում ներկայացվում են տեղեկություններ ՖԴԿ-ի համակարգմամբ իրականացված բանկային հաշիվների ռեեստրի ստեղծմանն ուղղությամբ իրականացված աշխատանքների վերաբերյալ:

Հաշվետվության հավելվածներում ներկայացվում են վիճակագրական տվյալներ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՖԴԿ-ում հաշվառված հաշվետվություն տրամադրող անձանց և ներկայացված հաշվետվությունների, իրականացված ուսուցումների, ներպետական և միջազգային գործընկերների հետ կնքված փոխըմբռնման համաձայնագրերի վերաբերյալ:

Սույն հաշվետվությունը ներկայացվում է ի կատարումն Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

ՖԴԿ-ն հաշվետվություն տրամադրող անձանցից ստանում է Օրենքով սահմանված պարտադիր տեղեկացման շեմը գերազանցող կանխիկ և անկանխիկ գործարքների, ինչպես նաև կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ հաշվետվություններ: Ստորև ներկայացվում են վիճակագրական տվյալներ 2019-2020թթ. կտրվածքով.

ԿԱՆԽԻԿ և ԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2020թ. **274.352**

2019թ. **280.049**

Օրենսդրական պահանջ

5 միլիոն ՀՀ դրամը գերազանցող գործարքներ

ԱՆԿԱՆԽԻԿ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2020թ. **265.926**

2019թ. **252.863**

Օրենսդրական պահանջ

20 միլիոն ՀՀ դրամը գերազանցող գործարքներ և 50 միլիոն ՀՀ դրամը գերազանցող անշարժ գույքի առուվաճառքի գործարքներ

ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2020թ. **253**

2019թ. **264**

Օրենսդրական պահանջ

Կասկածելի գործարքներ կամ գործարար հարաբերություններ

Աճել է ոչ բանկ հաշվետվություն տրամադրող անձանց ներկայացրած ԿԳՀ-ների քանակը

2019-2020թթ. ընթացքում ՖԴԿ-ն ստացել է համապատասխանաբար 264 և 253 ԿԳՀ, որոնց գերակշիռ մասը՝ համապատասխանաբար 255-ը և 196-ը ներկայացվել են բանկերի կողմից: 2020թ. աճել է այլ հաշվետվություն տրամադրող անձանցից, մասնավորապես, դրամական

փոխանցում իրականացնող ընկերություններից, ՀՀ իրավաբանական անձանց գրանցման ռեգիստրից, ինչպես նաև վիճակախաղերի և ինտերնետ շահումով խաղերի կազմակերպիչներից ստացվող ԿԳՀ-ների թիվը: Առաջին անգամ ԿԳՀ է ստացվել նաև նոտարից: Նշվածը վկայում է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգում հաշվետվություն տրամադրող անձանց ներգրավվածության բարձրացման մասին:

Ստացված ԿԳՀ-ները վերաբերել են ՓԼ և նախորդող հանցագործությունների հետ կապված կասկածներին: Հաշվետու ժամանակահատվածում ստացվել են նաև ԱՖ-ի հետ կապված կասկածներին վերաբերող սակավաթիվ ԿԳՀ-ներ, սակայն ՖԴԿ-ի կողմից իրականացված լրացուցիչ ուսումնասիրությունների, այդ թվում՝ իրավապահ մարմիններից ստացված արձագանքի արդյունքում ԱՖ-ի վարկածը չի հաստատվել:

Բանկերի կողմից ներկայացված ԿԳՀ-ներում իրավաբանական և ֆիզիկական անձանց ներգրավվածության ամփոփ պատկերը հետևյալն է.

| | Ֆիզիկական անձիք | | Իրավաբանական անձիք | |
|--------|-----------------|---------------------|-----------------------|----------------------|
| | ՀՀ քաղաքացի | Օտարերկրյա քաղաքացի | Հայաստանյան գրանցմամբ | Օտարերկրյա գրանցմամբ |
| 2020թ. | 128 | 27 | 64 | 66 |
| 2019թ. | 134 | 60 | 84 | 64 |

Ներկայացված ԿԳՀ-ների վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ քաղաքացի և ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձանց ներգրավվածությամբ ԿԳՀ-ները հիմնականում վերաբերում են հարկային պարտավորություններից խուսափելու, ապօրինի ձեռնարկատիրության իրականացնելու, որոշ դեպքերում՝ նաև խարդախության և թմրանյութերի առուվաճառքի հնարավոր նպատակով կատարվող գործարքներին:

Օտարերկրյա քաղաքացիների ներգրավվածությամբ ԿԳՀ-ները հիմնականում վերաբերում են խարդախության տարատեսակ սխեմաներին (այդ թվում՝ քարտային տվյալների ապօրինի օգտագործմամբ, զանգվածային մարքեթինգի մոդելով խարդախության սխեմաներ և այլն), իսկ օտարերկրյա գրանցմամբ իրավաբանական անձանց մասնակցությամբ ԿԳՀ-ները՝ հիմնականում ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆինանսական միջոցների տարանցիկ փոխանցումներին:

Ոչ բանկ հաշվետվություն տրամադրող անձանցից ստացված ԿԳՀ-ներում հանդիպել են դեպքեր, որոնք առնչվում են իրավաբանական անձի բաժնեմասնակցության և/կամ անշարժ գույքի շուկայական արժեքի թերագնահատմամբ կամ գերագնահատմամբ առուվաճառքի գործարքների միջոցով ՓԼ հնարավոր սխեմաներին, ինչպես նաև թմրանյութերի ապօրինի շրջանառությանն առնչվող ֆինանսական գործարքներին:

ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում առկա և հնարավոր ռիսկերի զսպման ուղղությամբ ձեռնարկվող կանխարգելիչ միջոցառումներն առանցքային նշանակություն ունեն ՓԼ/ԱՖ պոտենցիալ դրսևորումները վաղ փուլերում բացահայտելու ու խափանելու գործում: Ինչպես ՖԴԿ-ն, այնպես էլ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի մյուս մասնակիցները՝ հաշվետվություն տրամադրող անձինք և վերահսկող մարմինները, ռիսկերի կանխարգելիչ միջոցառումների ձեռնարկման գործընթացում ունեն իրենց ուրույն դերը:

Սույն բաժնում ներկայացվում են տեղեկություններ հաշվետու ժամանակահատվածում իրականացված կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ՝ կարգավորման դաշտի կատարելագործման, հաշվետվություն տրամադրող անձանց ուղղորդման և տեղեկատվական համակարգերի զարգացման ուղղություններով:

Կարգավորման դաշտի կատարելագործում

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել է ««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որը ներկայացվել է ՀՀ շահագրգիռ գերատեսչությունների կարծիքին և գտնվում է համաձայնեցման փուլում:

Նախագծով ներկայացվող փոփոխությունները և լրացումները նպատակ ունեն վերացնել Հայաստանում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի միջազգային գնահատումներով արձանագրված մի շարք թերություններ, ինչպես նաև Օրենքի կիրառման ընթացքում ի հայտ եկած անհստակությունները: Մասնավորապես, ընդլայնվել է ՔԱՌԿ-ների շրջանակը՝ ներառելով տեղական բարձրաստիճան պաշտոնատար անձանց, միջազգային կազմակերպություններում նշանակալից գործառույթներ իրականացնող անձանց, այդ թվում՝ նրանց ընտանիքի անդամներին և նրանց հետ այլ կերպ փոխկապակցված անձանց, հստակեցվել են հաճախորդի իրական շահառուի նույնականացման և ինքնության ստուգմանն ուղղված քայլերը, նախատեսվել են ֆինանսական խմբի անդամների միջև կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ տեղեկությունների փոխանակման դրույթները, կատարվել են բովանդակային և տեխնիկական բնույթի այլ փոփոխություններ:

ՖԴԿ հաշվետվությունների տրամադրման առցանց համակարգի գործարկմամբ պայմանավորված՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 08.05.2020թ. որոշմամբ ընդունվել է բանկերի կողմից ՊՏԵԳ-ների և ԿԳՀ-ների տրամադրման նոր ձևը, տրամադրման կարգը և ժամկետները սահմանող իրավական ակտը: Մշակվել է

նաև նույն համակարգով նոտարների կողմից հաշվետվությունների տրամադրման կարգը սահմանող իրավական ակտ, որը ներկայում համաձայնեցման փուլում է:

Հաշվետվություն տրամադրող անձանց ուղղորդում

2020թ. ընթացքում կորոնավիրուսային համավարակով պայմանավորված ՓԼ/ԱՖ հնարավոր ռիսկերի զսպման նպատակով անհրաժեշտություն է առաջացել ուղղորդել հաշվետվություն տրամադրող անձանց, մասնավորապես՝ գործող օրենսդրության շրջանակներում անդրադառնալով ռիսկերի գնահատման առանձնահատկություններին: Միաժամանակ, հաշվետվություն տրամադրող անձանց հայերեն լեզվով տրամադրվել է ՖԱԹՖ-ի քարտուղարության կողմից կազմված տեղեկատվական հուշագիր, որով, ի թիվս այլ հարցերի, անդրադարձ է կատարվում համավարակի պայմաններում ՓԼ/ԱՖ նորահայտ սպառնալիքներին ու խոցելիություններին:

Իր գործառույթների շրջանակներում ՖԴԿ-ն հաշվետվություն տրամադրող անձանց 2020թ. տվել է շուրջ երկու տասնյակ հանձնարարական՝ ուղղված գործարքների և գործարար հարաբերությունների ՓԼ/ԱՖ բարձր ռիսկի զսպմանը և կանխարգելիչ միջոցառումների ձեռնարկմանը: Հանձնարարականները հիմնականում վերաբերել են.

- Խարդախության սխեմաների և դրանցում հավանական ներգրավվածություն ունեցող անձանց հետ կապված կանխարգելիչ միջոցառումների ձեռնարկմանը.
- Առանձին հաճախորդների գործարքների և գործարար հարաբերությունների հավելյալ ուսումնասիրությանը.
- Առանձին գործարքներում ՓԼ հնարավոր ռիսկերով պայմանավորված միջոցների արտահոսքի կանխարգելմանն ուղղված միջոցառումների ձեռնարկմանը.
- Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրությամբ սահմանված մի շարք պարտականությունների կատարմանն առնչվող պահանջների պարզաբանմանը:

Միայն ԿԳՀ-ներում ներառված դրվագներով շուրջ 60 դեպքում բանկերը մերժել կամ դադարեցրել են ՓԼ/ԱՖ տեսանկյունից բարձր ռիսկային գործարքները/ գործարար հարաբերությունները

Հաշվետու ժամանակահատվածում բանկերը միայն ԿԳՀ-ներում ներառված դրվագներով շուրջ 60 դեպքում մերժել են բարձր ռիսկային գնահատված գործարքների իրականացումը կամ դադարեցրել հաճախորդի հետ հաստատված գործարար հարաբերությունները:

ՀՀ առևտրային բանկերին տրամադրվել է հետադարձ արձագանք՝ ստացված ԿԳՀ-ների հիման վրա ՖԴԿ-ի կատարած վերլուծության ու ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ:

ԱՖ հնարավոր ռիսկերի արդյունավետ զսպման նպատակով հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են կանխարգելիչ միջոցառումները՝ ուղղված միջազգային կառույցների կողմից կիրառվող սահմանափակումներին վերաբերող պահանջների կատարմանը, այդ թվում՝ ՖԴԿ-ի կայքէջում ՄԱԿ ԱԽ-ի և ՖԱԹՖ-ի համապատասխան ցանկերում կատարված թարմացումները հրապարակելու և հաշվետվություն տրամադրող անձանց իրազեկելու միջոցով:

Հաշվետվություն տրամադրող անձինք իրազեկվել են նաև առանձին կազմակերպությունների և երկրների կողմից կիրառվող սահմանափակումների վերաբերյալ՝ դրանց առնչվող հնարավոր ֆինանսական պատժամիջոցներից զերծ մնալուն ուղղված քայլեր ձեռնարկելու նպատակով:

Ի կատարումն ահաբեկչության և ԱՖ-ի ռիսկի զսպմանն ուղղված միջազգային նախաձեռնությունների՝ հաշվետվություն տրամադրող անձանց դիտարկվող ժամանակաշրջանում տրվել են հանձնարարականներ՝ ԱՊՀ-ի շրջանակներում կազմված ահաբեկիչների ցանկերում ներառված անձանց նկատմամբ կանխարգելիչ միջոցառումներ ձեռնարկելու վերաբերյալ:

ՖԴԿ-ի նախաձեռնությամբ Միջգերատեսչական հանձնաժողովին ներկայացվել և 2020թ. դեկտեմբերի 8-ին հաստատվել է ահաբեկչության հետ կապված անձանց ազգային ցանկ, որը ներառում է 2020թ. սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 10-ը Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված ռազմական գործողություններին նախորդող ժամանակահատվածում և դրանց ընթացքում Թուրքիայի օժանդակությամբ հավաքագրված և Ադրբեջան տեղափոխված վարձկանների ու ահաբեկիչների (150 ֆիզիկական անձի և 12 կազմակերպություն) վերաբերյալ տվյալներ: Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկը 2020թ. դեկտեմբերի 10-ին հրապարակվել է ՖԴԿ-ի կայքէջում, ինչի մասին իրազեկվել են նաև հաշվետվություն տրամադրող անձինք և պատկան գերատեսչությունները:

Տեղեկատվական համակարգերի զարգացում

ՓԼ/ԱՖ արդյունավետ կանխարգելման տեսանկյունից կարևոր են ինչպես ՖԴԿ-ի, այնպես էլ հաշվետվություն տրամադրող անձանց կողմից կիրառվող տեղեկատվական համակարգերի զարգացմանն ուղղված նախաձեռնություններն ու աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում ի թիվս այլ աշխատանքների ՖԴԿ-ն ավարտական փուլով թեստավորել և 2020թ. սեպտեմբերի 15-ից գործարկել է բանկերի կողմից ՊՏԵԳ-ների և ԿԳՀ-ների անվտանգ առցանց միջավայրով ներկայացման նոր համակարգը, ինչպես նաև ՖԴԿ-ի վերլուծությունների համար նախատեսված գործերի կառավարման արդիականացված համակարգը:

Նշված համակարգերի նախագծման ու ներդրման անհրաժեշտությունը պայմանավորված է եղել.

- *Հաշվետվությունների ներկայացման գործընթացների պարզեցմամբ.* Ժամանակակից տեխնոլոգիական լուծումների (այդ թվում՝ վեբ-սերվիսով հաշվետվությունների ներկայացման հնարավորության) ներդրումը բանկերին թույլ է տալիս ՊՏԵԳ-ները տրամադրել գործարքների հաստատումից հետո հաշված բույքների ընթացքում.
- *Հաշվետվությունների կառուցվածքի և բովանդակության վերանայմամբ.* վերանայվել է ՊՏԵԳ-ների ընդհանուր կառուցվածքը, սահմանվել են հաշվետվական նոր ձևերին համապատասխան դաշտեր, ներդրվել են հաշվետվությունների բովանդակության տեխնիկական և տրամաբանական ստուգման մեխանիզմներ.
- *Տեղեկատվական անվտանգության բարելավմամբ.* հստակ տարանջատվել են հաշվետվություն ներկայացնող և ստացող կողմերի տիրույթները, ապահովվել է հաշվետվությունների ներկայացումից անմիջապես հետո բանկային գաղտնիք պարունակող տվյալների հեռացումը փոխանցման միջավայրից՝ բացառելով երրորդ անձանց դրանց հասանելի դառնալու հնարավորությունը, համալրվել են համակարգին հասանելիության սահմանափակման ցանցային և ծրագրա-ապարատային մակարդակները.
- *Միասնական միջավայրում տեղեկությունների մուտքագրման, մշակման և օգտագործման հնարավորության ստեղծմամբ.* հաշվետվությունների առցանց ներկայացման և ՖԴԿ գործերի կառավարման նոր և արդիականացված համակարգերն աշխատում են մեկ միասնական միջավայրում, ինչն ապահովում է ստացված տեղեկությունների ավելի դյուրին և արդյունավետ օգտագործումը վերլուծական աշխատանքներում:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ

ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ներպետական համագործակցությունը կարելի է պայմանականորեն բաժանել երկու մասի.

- Միջգերատեսչական հանձնաժողովի շրջանակներում ռազմավարական համագործակցություն՝ ոլորտում իրականացվող քաղաքականության մշակման և համակարգման ուղղությամբ.
- ՖԴԿ-ի, վերահսկող և իրավապահ մարմինների միջև գործառնական համագործակցություն՝ տեղեկությունների փոխանակման, կանխարգելիչ միջոցառումների իրականացման և ՓԼ/ԱՖ հնարավոր դեպքերի բացահայտման ուղղությամբ:

Միջգերատեսչական հանձնաժողով

Հաշվետու ժամանակաշրջանում գումարվել է Միջգերատեսչական հանձնաժողովի մեկ նիստ (հեռավար եղանակով): Օրակարգում եղել է 2020 թվականի պատերազմին նախորդող ժամանակահատվածում և դրա ընթացքում հավաքված տվյալների հիման վրա ահաբեկչության հետ կապված անձանց ցանկի հաստատումը:¹

ՖԴԿ-ն համակարգել է «Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման 2019-2021թթ. ազգային ռազմավարություն»-ից բխող միջոցառումների կատարումը, որի արդյունքները գրավոր կերպով ներկայացվել են Միջգերատեսչական հանձնաժողովի անդամներին:

Իրավապահ մարմինների հետ համագործակցություն

Իրավապահ մարմինների և ՖԴԿ-ի միջև ներպետական համագործակցությունը հիմնականում առնչվում է ՓԼ/ԱՖ վարկածներով տեղեկությունների փոխանակմանը:

Իրականացված վերլուծությունների արդյունքում ՓԼ վարկածով 2019-2020թթ. իրավապահ մարմիններին տրամադրված ծանուցումների, իրավապահ մարմիններից խնդրարկված և իրավապահ մարմինների հարցման հիման վրա տրամադրված տեղեկությունների, ինչպես նաև ՓԼ հանցակազմով հարուցված քրեական գործերի վերաբերյալ վիճակագրությունը ներկայացվում է աղյուսակի տեսքով.

¹ Նշված ցանկի վերաբերյալ առավել մանրամասն տես սույն հաշվետվության «Կանխարգելիչ միջոցառումներ» բաժնում:

| Վիճակագրություն | 2019թ. | 2020թ. |
|---|----------------|--------|
| Իրավապահ մարմիններին ծանուցման տրամադրում | 51 | 50 |
| Իրավապահ մարմիններից տեղեկությունների խնդրարկում | 3 | 6 |
| Իրավապահ մարմինների հարցման հիման վրա տեղեկությունների տրամադրում | 219 | 558 |
| ՓԼ հանցակազմով հարուցված քրեական գործեր | 8 ² | 21 |

Հաշվետու ժամանակահատվածում ՖԴԿ-ի կողմից կատարված վերլուծությունների արդյունքներով ՓԼ/ԱՖ վարկածների առաջադրմամբ իրավապահ մարմիններին ուղարկված ծանուցումները հիմնականում վերաբերել են հետևյալ իրավիճակներին.

- ՔԱՈՒԱ-ների մասնակցությամբ ֆինանսական գործարքներ.
- Խարդախության տարատեսակ հանցագործությունների արդյունքում ձևավորված միջոցների տեղաբաշխմամբ ՓԼ սխեմաներ.
- Հարկային պարտավորություններից խուսափելու, ապօրինի ձեռնարկատիրություն իրականացնելու, տնտեսական գործունեության իրական ծավալները թաքցնելու միտում պարունակող ֆինանսական գործարքներ.
- Զանգվածային մարքեթինգի տարբեր մոդելների կիրառմամբ հանցավոր ճանապարհով ստացված միջոցների օրինականացման դեպքեր.
- ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆինանսական միջոցների տարանցիկ փոխանցումներ.
- Թմրանյութերի իրացման արդյունքում հանցավոր ճանապարհով ստացված միջոցների օրինականացման սխեմաներ.
- ՀՀ կենտրոնական բանկի և միջազգային կազմակերպությունների կողմից հրապարակված տիպաբանություններով նկարագրված սխեմաներին համապատասխանող այլ իրավիճակներ:

Հաշվետու ժամանակաշրջանում ՖԴԿ-ն համագործակցել է իրավապահ մարմինների հետ ֆինանսական հետախուզության գործիքակազմով ստացված տվյալների արդյունավետ օգտագործումն ապահովելու նպատակով:

Իրավապահ մարմինների կողմից ՖԴԿ-ին ներկայացված հարցումների քանակը շեշտակի աճել է՝ 2019թ. կազմելով 202, իսկ 2020թ.՝ 575: Հարցումների քանակի կտրուկ ավելացումը պայմանավորված է հանցավոր գույք առաջացնող նախորդող հանցագործությունների քննության ընթացքում իրավապահ մարմինների

² Գործերից մեկը հարուցված է եղել դեռևս 2018 թվականին, սակայն ՓԼ հանցակազմով մեղադրանք առաջադրվել է 2019 թվականին:

կողմից ՓԼ հանցակազմի առավել հաճախ դիտարկմամբ, ինչպես նաև կոռուպցիոն բնույթի հանցագործությունների արդյունքում ստացված միջոցների օրինականացման հնարավոր դեպքերի բացահայտման աճով:

**ՓԼ հանցակազմով
հարուցվել է 21
քրեական գործ**

Իրավապահ մարմինների հարցումներին պատասխանելու համար ՖԴԿ-ն իր հերթին հարցումներ է կատարել ոչ միայն ՀՀ տարածքում գործող ֆինանսական հաստատություններին, այլև, անհրաժեշտության դեպքում, օտարերկրյա ՖՀՄ-ներին:

2020թ. ընթացքում ՓԼ հանցակազմով հարուցվել է 21 գործ, որոնցից 13-ի համար նախորդող են հանդիսացել կոռուպցիոն բնույթի հանցագործություններ (պաշտոնեական լիազորությունները չարաշահելը, կաշառք ստանալը, ձեռնարկատիրական գործունեությանը ապօրինի մասնակցելը, պաշտոնեական կեղծիքը, առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելը, պաշտոնեական անփութությունը), 2-ի համար՝ խարդախությունը, 1-ական գործի համար՝ յուրացումը կամ վատնումը, հարկերից խուսափումը, շորթումը, թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը իրացման նպատակով, երեխայի առքը կամ վաճառքը՝ զուգակցված հանցավոր համագործակցության ստեղծման և ղեկավարման հետ: ՓԼ գործերից 1-ով նախորդող հանցագործության համար մեղադրանք դեռևս առաջադրված չէ: 2020թ. ՓԼ հանցակազմով հարուցված բոլոր քրեական գործերի շրջանակներում ՖԴԿ-ն ակտիվորեն նպաստել է գործերի ֆինանսական բաղադրիչի քննությանը՝ սեփական նախաձեռնությամբ տրամադրված ծանուցումների կամ իրավապահ մարմիններից ստացված հարցումներին պատասխանների եղանակով: Տեղեկությունների փոխանակմանը զուգահեռ կազմակերպվել են համակողմանի քննարկումներ առանձին քրեական գործերի առնչությամբ:

Ընդհանուր առմամբ, ՖԴԿ-ի ստացած ազդակների վերլուծության արդյունքում իրավապահ մարմիններին տրամադրված ծանուցումների և հարուցված քրեական գործերի հիմքում ընկած վարկածները հիմնականում համադրելի են, ինչն իր հերթին ՖԴԿ-ի և իրավապահ մարմինների միջև արդյունավետ համագործակցության կարևոր ցուցիչ է:

Վերահսկողություն և ստուգումներ

Համավարակի պայմաններում տեղերում ստուգումներ չեն իրականացվել: Փոխարենը, ի լրումն կանոնավոր հեռակա վերահսկողության, իրականացվել են թիրախային ուսումնասիրություններ՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

Վերահսկողության նշված միջոցառումների արդյունքում էական խախտումներ չեն բացահայտվել: 4 ֆինանսական հաստատության և 1 նոտարի նկատմամբ կիրառվել են պատասխանատվության միջոցներ՝ նախազգուշացումների ձևով:

Ֆինանսական հաստատությունների կողմից օրենսդրության խախտումները հիմնականում վերաբերել են լիազոր մարմին ՊՏԵԳ-ների ոչ պատշաճ տրամադրմանը, հաճախորդին պատշաճ ուսումնասիրության միջոցառումների ոչ ամբողջական իրականացմանը, գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման կամ դադարեցման, առանց առերես շփման գործարար հարաբերության հաստատման մասով պարտականությունների ոչ պատշաճ կատարմանը և այլն:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՖԴԿ-ն ՓԼ/ԱՖ դեմ պայքարի շրջանակներում համագործակցում է ինչպես օտարերկրյա ՖՀՄ-ների հետ, այնպես էլ ոլորտում մասնագիտացած միջազգային կազմակերպությունների հետ՝ տեղեկությունների փոխանակման, տարբեր աշխատանքային ծրագրերի իրականացման եղանակով: Ի դեմ ՖԴԿ-ի՝ Հայաստանը մասնակցում է ՓԼ/ԱՖ ոլորտում միջազգային ստանդարտներ մշակելու, տարբեր երկրների կողմից դրանց ներդրումն ու իրականացումը գնահատելու գործում ներգրավված միջազգային կազմակերպությունների ու կառույցների, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի, ՖՀՄ-ների Էգմոնտ խմբի, ԵԽ Վարչապալայի կոնվենցիայի Կողմերի համաժողովի, Եվրասիական խմբի, ԱՊՀ ՖՀՄ-ների ղեկավարների խորհրդի աշխատանքներին:

ՄԱՆԻՎԱԼ հանձնախումբ

Հաշվետու ժամանակահատվածում ՖԴԿ-ն Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող պատվիրակության կազմում մասնակցել է ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի աշխատանքներին: 2020թ. ՖԴԿ-ի ներկայացուցիչները ներգրավվել են Սլովակիայի, Սուրբ Աթոռի (ներառյալ՝ Վատիկանի) և Սան Մարինոյի՝ ՖԱԹՖ-ի հանձնարարականներին համապատասխանության 5-րդ փուլի գնահատման խմբերում՝ որպես իրավապահ և ֆինանսական հարցերով գնահատող-փորձագետներ:

ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի 60-րդ լիազումար նիստի, ինչպես նաև միջանկյալ նստաշրջանի ընթացքում ՖԴԿ-ն հանդես է եկել որպես Հունգարիայի, Ուկրաինայի և Չեխիայի գնահատման հաշվետվությունների դիտանցող փորձագետների հատուկ խմբերի անդամ:

2020թ. նոյեմբերին ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբին է ներկայացվել ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 5-րդ փուլի գնահատման հաշվետվությամբ արձանագրված հանձնարարականների կատարման վերաբերյալ 2-րդ Առաջընթացի հաշվետվության շրջանակներում ՀՀ կողմից իրականացված քայլերի վերաբերյալ տեղեկատվությունը:

Էզմոնտ խմբ

ՖԴԿ-ն շարունակել է Էզմոնտ խմբի անվտանգ տեղեկատվական ցանցի միջոցով տեղեկություններ փոխանակել օտարերկրյա ՖՀՄ-ների հետ: ՖԴԿ-ի պատվիրակությունը մասնակցել է Էզմոնտ խմբի աշխատանքային խմբերի հանդիպումներին, ինչպես նաև Էզմոնտ խմբի անդամ ՖՀՄ-ների ղեկավարների նիստին, որոնց ընթացքում քննարկվել են մի շարք հիմնահարցեր, այդ թվում՝ տեղեկությունների երկկողմ և բազմակողմ փոխանակման դյուրինացումը, համագործակցության նոր հարթակների, ՖՀՄ-ների գործունեության արդյունավետության բարձրացումը: Նշված հանդիպումների ընթացքում, ի թիվս այլ հարցերի, անդրադարձ է կատարվել միջազգային ֆինանսական կայունության ապահովման գործում ՖՀՄ-ների կարևոր դերին:

ՖԴԿ-ի ներկայացուցիչները ներգրավվել են Էզմոնտ խմբի կողմից իրականացվող մի շարք ծրագրերում, այդ թվում՝ խմբին անդամակցության և համապատասխանության բնութագրիչների վերանայման, խմբի շրջանակներում կիրառվող հիմնական եզրույթների սահմանման աշխատանքներում:

ՖԴԿ-ի ներկայացուցիչն ընտրվել է Էզմոնտ խմբի գործադիր մարմնում որպես «Եվրոպա II» տարածաշրջանային ներկայացուցիչ՝ երկու տարի ժամկետով:

ԵՆ Վարչավայի կոնվենցիայի Կողմերի համաժողով

ԵՆ Վարչավայի կոնվենցիայի Կողմերի համաժողովի գործունեության շրջանակներում ՖԴԿ-ի ներկայացուցիչը մասնակցել է համաժողովի 12-րդ լիազույժար նիստին և բյուրոյի հանդիպումներին: Լիազույժար նիստի շրջանակներում քննարկվել են անդամ երկրների կողմից Կոնվենցիայի 3-րդ (բռնագրավման մեխանիզմներ), 7-րդ (քննչական իրավասություններ և միջոցներ) և 19-րդ (բանկային գործարքների մոնիտորինգի պահանջներ) հոդվածների իմպլեմենտացման վերաբերյալ թեմատիկ հաշվետվությունները, ինչպես նաև նախորդ հաշվետվություններով վեր հանված բացերի առնչությամբ անդամ պետությունների, այդ թվում՝ ՀՀ կողմից ձեռնարկված միջոցառումները:

ՖԴԿ-ի ներկայացուցիչը վերընտրվել է որպես բյուրոյի անդամ: Կողմերի համաժողովի որոշմամբ 13-րդ նիստի շրջանակներում քննարկվելու է կոնվենցիայի 10-րդ հոդվածի իմպլեմենտացումը (կորպորատիվ պատասխանատվություն), որի

վերանայող փորձագետների խմբի կազմում ընտրվել են նաև ՖԴԿ-ի ներկայացուցիչները:

Եվրասիական խումբ

Հաշվետու ժամանակահատվածում ՖԴԿ-ի ներկայացուցիչները մասնակցել են Եվրասիական խմբի 33-րդ լիազումար նիստին և աշխատանքային խմբերի հանդիպումներին: Լիազումար նիստի ընթացքում առանձնապես կարևորվել են Եվրասիական տարածաշրջանում համավարակի հետ կապված զարգացումների համատեքստում առավել արդիական դարձած ՓԼ/ԱՖ ռիսկերի գնահատումը և զսպումը, ինչպես նաև անդամ երկրների և դիտորդների փոխադարձ համագործակցության ամրապնդմանն ուղղված հարցերը:

Խմբի շրջանակներում ձևավորված՝ ՓԼ տարածաշրջանային ռիսկերի գնահատման աշխատանքային խմբում ներգրավվել է նաև ՖԴԿ-ի ներկայացուցիչը:

ԱՊՀ ՖՀՄ-ների ղեկավարների խորհուրդ

ՖԴԿ-ի ներկայացուցիչները մասնակցել են ԱՊՀ ՖՀՄ-ների ղեկավարների խորհրդի 15-րդ լիազումար նիստին, որի շրջանակներում, ի թիվս այլ հարցերի, քննարկվել է համավարակի հետևանքով առավել արդիական դարձած ՓԼ/ԱՖ ռիսկերի գնահատումը և զսպումը:

Օտարերկրյա ՖՀՄ-ներ

ՖԴԿ-ն շարունակել է օտարերկրյա ՖՀՄ-ների հետ համագործակցությունը, որի շրջանակներում 2020թ. ընթացքում ստացել է 39 և ուղարկել 48 հարցում: ՖԴԿ-ի և օտարերկրյա ՖՀՄ-ների միջև կնքված փոխըմբռնման հուշագրերի ամբողջական ցանկը ներկայացված է Հավելված 3-ում:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ԹԵՄԱՏԻԿ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2020թ. իրականացվել են ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային գնահատման հերթական՝ 2017-2019թթ. ժամանակահատվածին անդրադարձող շրջափուլի աշխատանքներ այդ նպատակով ձևավորված, ՖԴԿ-ի համակարգմամբ գործող աշխատանքային խմբի կողմից, որի կազմում ընդգրկվել են ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ հատուկ քննչական ծառայության, ՀՀ ազգային անվտանգության ծառայության, ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ ոստիկանության, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ արտաքին գործերի նախարարության, ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ դատական դեպարտամենտի և ՀՀ կենտրոնական բանկի ներկայացուցիչներ:

Գնահատումն իրականացվել է նախապես համապատասխան հարցաշարերի մշակման, ներգրավված գերատեսչությունների կողմից դրանց լրացման, ներկայացված տեղեկությունների վերլուծության և ամփոփման փուլերով: Գնահատման հաշվետվությամբ անդրադարձ է կատարվում բոլոր այն ոլորտներին, որոնք դիտարկվել են փողերի վլացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի 2010-2013թթ. և 2014-2016թթ. ազգային գնահատումների շրջանակներում՝ միաժամանակ առանձին ուսումնասիրության առարկա դարձնելով դրանց հակազդման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցող ֆինանսական և հարակից տեղեկությունների առկայությունն ու հավաստիությունը: Բացի այդ, առանձին վերլուծության է ենթարկվել գույքի բռնագանձման ինստիտուտը:

ՖԴԿ-ն նախաձեռնել է նաև ՀՀ առևտրային բանկերի գործունեությանն առնչվող ՓԼ/ԱՖ հնարավոր կամ առկա, այդ թվում՝ անդրսահմանային դրամական հոսքերի հետ կապված ռիսկերի թեմատիկ ուսումնասիրություն: Ուսումնասիրության արդյունքներով ձեռնարկվել են բացահայտված ռիսկերի զսպմանն ուղղված միջոցառումներ՝ այդ թվում բանկերին տրված ուղեցույցների և հանձնարարականների տեսքով:

ԱՅԼ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2019թ. հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշմամբ հաստատված ՀՀ 2019-2021թթ. հակակոռուպցիոն ռազմավարությունը և վերջինի միջոցառումների ծրագիրը (կետ 37), ՀՀ կենտրոնական բանկը ՖԴԿ-ի համակարգմամբ 2020թ. նախաձեռնել է բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի (այսուհետ՝ Ռեեստր) ստեղծման աշխատանքները: Դրանք պայմանականորեն կարելի է բաժանել 3 մասի՝ միջազգային փորձի ուսումնասիրություն, իրավական կանոնակարգերի մշակում և տեխնիկաձրագրային ապահովում: Այսպես.

- *Միջազգային փորձի ուսումնասիրություն.* ուսումնասիրվել են Չեխիայի, Իսպանիայի, Լատվիայի, Ֆրանսիայի, Մալթայի, Մոլդովայի, Ավստրիայի իրավական կարգավորումները և պրակտիկան: Լրացուցիչ տեղեկություններ են խնդրարկվել առավել ընդունելի մոդել ունեցող երկրների գործընկերներից, մասնավորապես, Լատվիայից և Չեխիայից:
- *Իրավական կանոնակարգերի մշակում.* միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքներով մշակվել, շահագրգիռ պետական մարմինների և մասնավոր հատվածի հետ քննարկվել և ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ): Համաձայն Նախագծի՝ Ռեեստրում ներառվելու են բանկային հաշիվների և պահատուփերի վերաբերյալ տեղեկություններ, այդ թվում՝ բացման, փակման ամսաթվերը, հաշվեհամարը, պահատուփի համարը, հաճախորդի, վերջինի լիազորված անձի տվյալները, բանկի վերաբերյալ տեղեկությունները: Այս առումով կարևոր է, որ Ռեեստրի ներդրմամբ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների ձեռքբերման ընթացակարգը, հասանելիություն ունեցող մարմինների շրջանակը որևէ փոփոխության չի ենթարկվելու: Նախագիծը ներկայում քննարկվում է ՀՀ կառավարությունում:
- *Տեխնիկաձրագրային ապահովում.* իրավական կանոնակարգերի մշակմանը զուգահեռ, աշխատանքներ են իրականացվել համակարգի տեխնիկաձրագրային լուծումների մշակման ուղղությամբ: Մասնավորապես, տեխնիկական ենթակառուցվածքը և ձրագրային համակարգը, որոնք ապահովվելու են բանկերից համապատասխան տեղեկությունների ստացումը և Ռեեստրի ձևավորումը, մշակման ավարտական փուլում են և համապատասխան թեստավորումն անցնելուց հետո պատրաստ կլինեն գործարկման:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Հաշվետվություն տրամադրող անձինք և ներկայացված հաշվետվությունները

| Հաշվետվություն տրամադրող անձի տեսակը | ՖԴԿ-ում հաշվառված քանակը | Ներկայացված հաշվետվությունները | |
|---|--------------------------|--------------------------------|------------|
| | | ՊՏԵԳ | ԿԳՀ |
| Ֆինանսական հաստատություններ | | | |
| Բանկեր | 17 | 523580 | 196 |
| Վարկային կազմակերպություններ | 44 | 3306 | 3 |
| Արտարժույթի առուվաճառքի գործունեություն իրականացնող անձինք | 176 | 1014 | - |
| Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեություն իրականացնող անձինք | - | - | - |
| Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող լիցենզավորված անձինք | 9 | 162 | 32 |
| Ներդրումային ընկերություններ | 13 | 721 | 1 |
| Ներդրումային ֆոնդերի կառավարիչներ | 5 | 48 | - |
| ՀՀ Կենտրոնական դեպոզիտարիա | 1 | - | 3 |
| Ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) ընկերություններ | 8 | - | - |
| Ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) միջնորդային գործունեություն իրականացնող անձինք | 4 | - | - |
| Կորպորատիվ ներդրումային ֆոնդեր | 2 | 1 | - |
| ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորված կառավարիչ չունեցող ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդեր | 24 | 94 | - |
| Գրավատներ | 82 | 463 | - |
| Ոչ ֆինանսական հաստատություններ | | | |
| Ռիելտորական գործունեություն իրականացնող անձինք | 205 | - | - |
| Նոտարներ | 113 | 8973 | 1 |
| Փաստաբաններ, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերեր և իրավաբանական անձինք | 1489 | - | - |
| Անհատ ձեռնարկատեր հաշվապահներ և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք | 10 | - | - |
| Աուդիտորներ և աուդիտորական կազմակերպություններ | 26 | - | - |
| Թանկարժեք մետաղների դիլերներ | - | - | - |
| Թանկարժեք քարերի դիլերներ | 22 | - | - |
| Արվեստի գործերի դիլերներ | - | - | - |
| Սակարկությունների կազմակերպիչներ | - | - | - |
| Շահումով խաղերի և խաղատների կազմակերպիչներ | 2 | 4 | - |
| Վիճակախաղերի կազմակերպիչներ | 4 | 236 | 6 |
| Ինտերնետ շահումով խաղերի կազմակերպիչներ | 4 | 1716 | 11 |
| Հավատարմագրային կառավարման և իրավաբանական անձանց գրանցման ծառայություններ մատուցող անձինք | - | - | - |
| Այլ անձինք | | | |
| Վարկային բյուրոներ | 1 | - | - |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 2261 | 540318 | 253 |

Հավելված 2. Հաշվետվություն տրամադրող անձանց համար իրականացված ուսուցումները

| Թեմա | Հաշվետվություն տրամադրող անձ |
|--|--|
| Ֆինանսական հաստատություններ | |
| <ul style="list-style-type: none"> • Հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն • Գործարքի կամ գործարար հարաբերության բարձր ռիսկի և կասկածելիության չափանիշներ • Վերլուծական տվյալների աղբյուրներ • Իրավիճակային վերլուծություններ • ԱՖ և ՋՈՁ ՏՖ դեմ պայքարի միջոցառումներ | Բոլոր ոչ-բանկ ֆինանսական հաստատությունները |
| <ul style="list-style-type: none"> • ՓԼ սխեմաներ • Իրական շահառուի բացահայտումը • ««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ ԿԲ համապատասխանության գործառույթը | Բանկեր |
| Ոչ ֆինանսական հաստատություններ | |
| <ul style="list-style-type: none"> • ««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը • Իրական շահառուի բացահայտման և հաճախորդի պատշաճ ուսումնասիրության հետ կապված խնդիրներ • Պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքներ. հաշվետվություն տրամադրող այլ անձանց հետ համեմատականներ | Նոտարներ |

Հավելված 3. Գործընկերների հետ կնքված համաձայնագրերը

ՖԴԿ-ի և ներպետական իրավասու մարմինների միջև կնքված փոխըմբռնման համաձայնագրեր

Իրավապահ մարմիններ

- ՀՀ դատախազություն (վերակնքված՝ 28.11.2016թ.)
- ՀՀ ազգային անվտանգության ծառայություն (կնքված՝ 24.01.2017թ.)
- ՀՀ ոստիկանություն (վերակնքված՝ 18.11.2016թ.)
- ՀՀ պետական եկամուտների կոմիտե (վերակնքված՝ 25.09.2017թ.)
- ՀՀ քննչական կոմիտե (կնքված՝ 16.11.2016թ.)
- ՀՀ հատուկ քննչական ծառայություն (կնքված՝ 14.03.2019թ.)

Այլ իրավասու մարմիններ

- ՀՀ արդարադատության ակադեմիա (կնքված՝ 12.11.2016թ.)
- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն (կնքված՝ 19.01.2017թ.)
- ՀՀ ֆինանսների նախարարություն (կնքված՝ 10.10.2017թ.)
- ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (կնքված՝ 18.09.2020թ.)

ՖԴԿ-ի և օտարերկրյա ՖՀՄ-ների միջև կնքված փոխըմբռնման հուշագրեր

| Երկիր | Ամսաթիվ | Երկիր | Ամսաթիվ |
|--|--------------|---|--------------|
|  Ավստրալիա | 26.08.2009թ. |  Ղրղզստան | 19.02.2014թ. |
|  ԱՄԷ | 28.05.2009թ. |  Ճապոնիա | 29.10.2012թ. |
|  Բելառուս | 04.02.2008թ. |  Մակեդոնիա | 13.07.2011թ. |
|  Բերմուդա | 21.10.2009թ. |  Միացյալ Թագավորություն | 27.09.2012թ. |
|  Թաիլանդ | 29.11.2010թ. |  Մոլդովա | 12.07.2011թ. |
|  Թայվան | 12.07.2011թ. |  Մոնտենեգրո | 12.07.2011թ. |
|  Թուրքմենստան | 24.10.2017թ. |  Չինաստան | 08.06.2011թ. |
|  Իսրայել | 03.11.2011թ. |  Պանամա | 03.07.2013թ. |
|  Իրան | 26.05.2010թ. |  Ռումինիա | 27.05.2009թ. |
|  Լատվիա | 28.10.2017թ. |  Ռուսաստան | 09.06.2015թ. |
|  Լեհաստան | 22.09.2009թ. |  Սան Մարինո | 15.03.2010թ. |
|  Լիխտենշտեյն | 04.06.2014թ. |  Սաուդյան Արաբիա | 12.07.2011թ. |
|  Խորվաթիա | 11.07.2012թ. |  Սերբիա | 12.07.2011թ. |
|  Կանադա | 21.12.2009թ. |  Վատիկան | 14.04.2017թ. |
|  Կիպրոս | 11.07.2012թ. |  Վրաստան | 26.02.2008թ. |
|  Հարավաֆրիկյան Հանրապետություն | 22.05.2009թ. |  Տաջիկստան | 19.05.2011թ. |
|  Ղազախստան | 11.11.2015թ. |  Ուկրաինա | 13.03.2008թ. |